ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 07 >> հունիսի 2016 թվականի. N: 185-Ա **ք.Գյումրի**

<<ԳՅՈՒՄՐՈՒ ԻՆՖԵԿՑԻՈՆ-ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «իա» ենթակետի, 84-րդ հոդվածի 1-ին կետի «իգ»,«իդ» ենթակետերի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի մարտի 12-ի N 548-Ա հրամանը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1)«Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերության) 2016 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Ընկերության 2016 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ընկերության տնօրենի վարձատրության չափը սահմանել՝

1) Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկում իրականացված աշխատանքների գծով մեկ հաստիքային միավորի համար ամսական 220000 դրամ:

2) Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ մինչև 10 տոկոս վճարովի ծառայության աճի դեպքում լրացուցիչ վճարովի ծառայության ամսական գումարի 1.5 տոկոսի չափով:

3) Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ 10 տոկոս և ավելի վճարովի ծառայության աճի դեպքում լրացուցիչ վճարովի ծառայության ամսական գումարի 2.0 տոկոսի չափով:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2016 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ նիշեց է